Գուգարքում մեծ թիվ են կազմում IV-VII դդ. թվագրվող, բազմաբնույթ զարդաքանդակներով քառակող կոթողները, սակայն առանց գրավոր հիշատակագրության: Արջուտի թերատված կոթողն այս իմաստով (և քանդակներով) եզակի դիպված է, որին գալիս են լրացնելու Ճոճկանի, Աթորու և Արդվիի արձանագիր կոթողները:

Ճարտարապետ Վահագն Գրիգորյանը եկեղեցին թվագրում է VI դ. առաջին կեսով (տես նրա Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները, Երևան, 1982, էջ 33-35):

ԳՈԳԱՐԱՆ

Գյուղը գտնվում է Սպիտակ քաղաքից 12 կմ հյուսիս-արևմուտք, Բազումի լեռնաշղթայի հարավային ստորոտում, «ալպիական մարգագետիններով» հարուստ, ծորերով ու սարերով շրջապատված արգավանդ ու գեղատեսիլ մի վայրում: Գյուղը 1988 թ. երկրաշարժից առավել տուժած բնակավայրերից է և անցած 20 տարիների ընթացքում աստիճանաբար բուժում է իր վերքերը: Բնակավայրը և նրան հարող շրջակա տարածքները հարուստ են պատմամշակութային հուշարձաններով: Դրանք միջին և ուշ բրոնզի, վաղ երկաթի դարաշրջանների բազմաթիվ բնակատեղիներ են, դամբարանադաշտեր ու սրբատեղիներ, միջնադարյան ամրոց, արհեստական քարանձավներ, գյուղատեղիներ:

Գոգարանը գրավոր աղբյուրներում չի հիշատակվում, սակայն ճարտարապետական կոթողային հուշարձանների և նյութական մշակույթի այլ մնացորդների առկայությունը տարածքում՝ խոսում է տեղում վաղմիջնադարյան բնակավայրի գոյության օգտին, որն ամենայն հավանականությամբ Գնթունիների նախարարական տանն է պատկանել, ինչի վկայություն է Գնթունիների շառավիղների X-XI դդ. արձանագրված տապանաքարերի առկայությունը եկեղեցու բակում:

970. Տապանաքար. երկլանջ, եկեղեցու արևմտյան մուտքի առաջ, հարավային լանջին, 2 տող.



... ԳՆԹՈՒՆԻ ՄԱՆԿԻԿ
... ԱՊԷՂ ԳՆԱՑԻ:

Հրատ. Գ. Սարգսյան, Վիմագրագիտական էսքիզներ, Պատմաբանասիրական հանդես, 2008, 2, էջ 202-204:

Ծանոթ. Տապանաքարի ձախ կեսը կոտրված է: Դատելով մատենագրական վկայություններից՝ Ագաթանգեղոս, Բուզանդ, Դրասխանակերտցի, «մանկիկ» բառեզրով արտահայտվել է արական սեռի երեխա իմաստը: Ըստ այսմ, մեր տապանագրում հիշված է Գնթունյաց տոհմին պատկանող տղա երեխա:

Չենք բացառում բառիս օգտագործումը որպես անձնանուն:[91] Անվան հնագույն վկայությունը պահպանվել է Տաթևի 844 թ. կալվածագրի վկաների ցուցակում. «Մանկիկ՝ Ōղկաց քորեպիսկոպոս»:[92] Հ. Աճառյանը նշում է ևս մի Մանկիկ(երեց), որը 1262 թ. Բագնայրի վանքին կալվածքներ ու ձեռագրեր է նվիրել:[93]

---

[91] Այս միտքը հուշեց հնագետ-մշակութաբան, պ.գ.դ. Հ. Պետրոսյանը:
[92] *Ստեփանոս Օրբելյան*, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 208:
[93] *Հ. Աճառյան*, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Եր., 1946, էջ 202-203: